

**ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականության համակողմանի ուսումնասիրության համար հատուկ կարևորություն ունի արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների մշակման, պլանավորման և իրականացման օրենսդրական մեխանիզմների ուսումնասիրությունը: Հանրապետության հռչակումից ի վեր Թուրքիան անցել է զարգացման մի քանի փուլեր, որոնք ունեցել են զարգացման ու առաջընթացի որոշ ինքնատիպություն և ներքին տրամաբանություն: 1924, 1961 և 1982 թվականների սահմանադրությունները, նպատակ ունենալով կարգավորել քաղաքական և հասարակական իրավահարաբերությունների համակարգը, անկարող էին շրջանցել նաև արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեխանիզմները: Յուրաքանչյուր նոր սահմանադրություն իր հետ բերեց որոշակիություն և հստակություն արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործում պատասխանատվության ոլորտների հստակեցման, վերահսկողության մեխանիզմների բաժանման առումներով:

1924 թ. սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն օրենսդիր և գործադիր իշխանությունները պատկանում էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովին և կենտրոնացած էին նրա լիազորությունների ներքո: Եթե առաջինի դեպքում իշխանությունն իրականացվում էր ուղղակի կերպով, ապա երկրորդի դեպքում իր կողմից ընտրված նախագահի և կառավարության կողմից¹: Սահմանադրության 26-րդ հոդվածը կարգա-

¹ Հոդված 5-7, 1924 Թուրքիայի Հանրապետության սահմանադրություն, առավել մանրամասն՝ E. M. Earle, The New Constitution of Turkey, Political Science Quarterly, Vol. 40, No. 1., 1925, p. 89

վորում էր Ազգային ժողովի այն լիազորությունները, որոնք առնչվում էին միջազգային հռչակագրերի վավերացմանը, այլ պետությունների հետ խաղաղության պայմանագրերի կնքմանը, պատերազմ հայտարարելուն²: 36-րդ հոդվածի համաձայն Թուրքիայի նախագահին էր վերապահված արտերկրում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների ընդունման իրավունքը:

Երկրորդ համաշխարհայինից հետո, երբ Թուրքիա-Արևմուտք հարաբերությունները բավական սերտացան, գործադիր և օրենսդիր իշխանությունների միջև լիազորությունների բաժանարար գծերը շատ հաճախ անտեսվում էին՝ վկայակոչելով ազգային գերակա շահերը: Օրինակ, ինստիտուցիոնալ առումով Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին բավական ուշագրավ էր: Շրջանցելով սահմանադրությունը՝ գործադիրն ինքնուրույն որոշում կայացրեց՝ զորք ուղարկել Կորեական թերակղզի՝ չունենալով Ազգային ժողովի համապատասխան թույլտվությունը: Նախագահ Բայարի, վարչապետ Մենդերեսի և արտգործնախարար Ֆուաթ Բյուրուկուի կողմից ներկայացված բացատրությունների համաձայն, եթե թուրք զինվորականների մասնակցության հարցը քննարկման դրվեր Ազգային ժողովում հնարավոր էր անպատեհ բարդություններ առաջանային, որոնք կդանդաղեցնեին զորքերի ուղարկման գործընթացը³: Քանի որ Թուրքիայի քաղաքական վերնախավում կար հստակ որոշում, որ Կորեական պատերազմին մասնակցության պարագայում ՆԱՏՕ-ին անդամակցության հեռանկարները շատ ավելի իրական կլինեին, ապա իշխանությունները պատրաստ էին գնալ ցանկացած քայլի: Ավելին, բուն որոշումը կայացվեց նախագահի, վարչապետի, արտաքին գործերի և պաշտպանության նախարարների, Գլխավոր շտաբի պետի, ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերի հրամանատարների Յալովայում համատեղ կայացած որոշման արդյունքում⁴: Մի քանի օր անց կառավարության հատուկ նիստում պաշտոնապես որոշվեց հավանություն տալ այդ նա-

² Նույն տեղում, էջ 91

³ F. Ahmad, *The Turkish Experiment in Democracy, 1950-1975*, Hurst and Company, London, 1977, p. 391

⁴ General F. Belen, quoted in Mumtaz Soysal, *Dış politika ve parlamento*, 1964, ss. 201-202; T. Ataov, *NATO and Turkey*, 1970, s. 170

խագծին, և Թուրքիայի մասնակցությունը Կորեական պատերազմին հաստատվեց կառավարության որոշմամբ:

1961 թ. սահմանադրությունն էլ ավելի հստակեցրեց արտաքին քաղաքականության ոլորտում նախագահի, օրենսդրի և գործադիր իրավունքներն ու պարտականությունները⁵: 1961 թ. չափավոր ազատական սահմանադրությունը էական դեր է կատարել երկրի ներքաղաքական կյանքի ազատականացման ու ապագադափարականացման, մարդու քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքների և հիմնարար ազատությունների տրամադրման հարցերում, այն միաժամանակ կարևոր դեր է կատարել նաև պետական ինստիտուտների հետագա կայացման առումով: Սահմանադրության մեջ ներգրավվեցին մի քանի հոդվածներ, որոնք կարգավորում էին օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերություններն արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ոլորտներում: Ի տարբերություն 1924 թ. Սահմանադրության՝ 1961 թ. Սահմանադրության հինգերորդ և վեցերորդ հոդվածները հստակորեն առանձնացնում էին օրենսդիր և գործադիր իշխանությունները: Վեցերորդ հոդվածը նշում էր, որ գործադիր իշխանությունը իրականացվելու էր երկրի նախագահի և նախարարների խորհրդի միջոցով՝ օրենքի շրջանակներում: Ի տարբերություն 1924 թ. Սահմանադրության 26-րդ հոդվածի. որտեղ հպանցիկ նշված էր միջազգային պայմանագրերի վավերացման համար Ազգային ժողովի ունեցած լիազորության մասին՝ 1961 թ. Սահմանադրության 65-րդ հոդվածը, ոչ միայն ընդարձակ կերպով սահմանում էր այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի Ազգային ժողովի կողմից վավերացման ընթացակարգերը, այլ նաև հստակեցնում դրանց հետագա կիրառման սկզբունքները⁶: Սահմանադրության 66-րդ հոդվածը սահմանում էր, որ բացառապես Ազգային ժողովին էր պատկանում պատերազմի հայտարարման, այլ պետություններում Թուրքիայի զինված ստորաբաժանումների տեղակայման և օտար պետությունների զինված ստորաբաժանումների Թուրքիայում տեղակայման իրավունքը և հավելում, որ նման թույլտվություն

⁵ S. Balkan, A. E. Uysal and K. H. Karpat (Trans.), Constitution of the Turkish Republic, Ankara, 1961, p. 48.

⁶ Նույն տեղում, էջ 15:

տրվում է Ազգային ժողովի և Սենատի⁷ համատեղ նիստում: Նույն հոդվածը նաև հստակեցնում էր այն բացառությունը, որի դեպքում օրենսդիր թույլտվությունը հարկավոր չէր: Դա, նախ և առաջ, վերաբերում էր միջազգային պայմանագրերի համաձայն Թուրքիայի ստանձնած պարտականությունների իրականացմանը, որն առաջին հերթին որպես ՆԱՏՕ-ի անդամի պարտականությունների կատարումն էր:

97-րդ հոդվածը, 1924 թ. Սահմանադրության 36-րդ հոդվածի նմանությամբ, սահմանում էր պետության գլխի՝ նախագահի, լիազորությունները արտերկրում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչների նշանակման և Թուրքիայում այլ պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների ընդունման իրավունքը: Ավելացված էին նաև միջազգային պայմանագրերի և հռչակագրերի կնքման և վավերացման դրույթները:

1982 թ. նոյեմբերյան Սահմանադրությունը, որը Թուրքիայի գործող մայր օրենքն է, էականորեն տարբերվում էր նախորդներից թե՛ ձևի, թե՛ բովանդակության, թե՛ վերահսկողության մեխանիզմների առումներով⁸: Հինվորականների վերահսկողությամբ գրված սահմանադրությունը կրում էր զինվորականների կնիքը և հետևում էր որոշակի տրամաբանության: Արտաքին քաղաքականության կազմակերպման և միջազգային հարաբերություններում Թուրքիայի շահերի ներկայացման առումներով կարևոր էին 1982 թ. Սահմանադրության մի շարք հոդվածներ: 1982 թ. Սահմանադրության 112-րդ հոդվածի համաձայն կառավարությունն է որոշում արտաքին քաղաքական ուղղությունները և կրում պատասխանատվություն դրանց համար, մինչդեռ ԱԳՆ-ն իրականացնում է այդ որոշումները, ինչպես նաև կատարում առաջարկներ այլընտրանքային քաղաքական ուղղությունների վերաբերյալ⁹: Նախորդ սահմանադրությունների նման՝ օրենսդիրն վերապահված էր միջազգային պայմանագրերի վավերացման և պատերազմի հայտարարման, Թուրքիայի տարածքում օտարերկրյա ՁՈՒ-ի ներկայության և արտերկրում Թուրքիայի ՁՈՒ-ի տեղակայումների վերաբերյալ որոշումների կայացումը և վերահսկումը:

⁷ 1961 թ. Սահմանադրությամբ Թուրքիայի խորհրդարանը երկպալատ էր:

⁸ 1982 Turkish constitution, http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_protect/---protrav/---ilo_aids/documents/legaldocument/wcms_127495.pdf

⁹ Թուրքիայի սահմանադրություն, 1982 թ., հոդված 112

Սահմանադրությունում նշված կարգավորող ոլորտներից բացի էական էին նաև այն օրենսդրական և ենթօրենսդրական կարգավորումները, որոնք միտված էին առավել կարգավորելու արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման մեխանիզմները: Հատկապես 1980-2000 թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործընթացներում առաջին անգամ նկատվեցին նախորդ տասնամյակներից էականորեն տարբերվող փոփոխություններ:

Այս տարիներին փոխվեցին նաև հիմնական դերակատարները, թեև ոչ միանգամից: 1920-70-ական թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության պլանավորման և իրականացման գործընթացներում արտաքին գործերի նախարարությունից (ԱԳՆ) զատ առանցքային դերակատարում են ունեցել նաև Թուրքիայի Ձինված ուժերի Գլխավոր շտաբը, իսկ 1961 թ. հետո՝ Ազգային անվտանգության խորհուրդը: Հարկ է նշել, որ կախված արտաքին քաղաքականության առջև ծառացած խնդիրների բնույթից և ծրագրերի բազմազանությունից, շատ հաճախ ԱԳՆ-ի հետ միասին արտաքին քաղաքականության իրագործմանը լծվել են թե՛ էներգետիկայի, թե՛ էկոնոմիկայի, թե՛ առևտրի, թե՛ կրթության, թե՛ մշակույթի և թե՛ այլ նախարարությունները: Այսպիսով, 1980-ականներից սկսված Թուրքիայի արտաքին քաղաքականության նախորդ ավանդական մեթոդները, համակարգերն և դերակատարները դանդաղորեն փոխվում էին՝ հիմք հանդիսանալով հետագա տասնամյակներում տեղի ունեցած փոփոխությունների համար:

Անհատների մակարդակում արտաքին քաղաքականության ոլորտում նախագահները, վարչապետները, արտաքին գործերի նախարարները, ԳՇ-ի պետերը և նրանց տեղակալները առանցքային դեր են կատարել արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իրականացման առումներով: 1923-1950 թթ. ընկած ժամանակահատվածում նախ Մուսթաֆա Քեմալի, ապա Իսմեթ Ինյոնյուի կառավարման ժամանակահատվածներում երկու նախագահներն էլ անձնապես ներգրավված էին արտաքին քաղաքականության հարցերում: Նրանց հեղինակությունը և փորձառությունը էականորեն ազդում էին արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների կայացման վրա: 1950-60 թթ., երբ իշխում էր Դեմոկրատական կուսակցությունը, արտաքին գործերի նախարարության դերը էականորեն աճեց: Դրա պատճառներն, ըստ Ումուր

Ուզերի, երկուսն էին, մասնագիտությամբ պատմաբան արտաքին գործերի նախարար Ֆուաթ Քյոփրուլուն, չունենալով դիվանագիտական փորձառություն, գերազանցապես հենվեց ԱԳՆ-ի աշխատակազմի վրա: Այս շրջանում զինվորականությունը երկրորդ պլան էր մղվել՝ զրկված լինելով արտաքին քաղաքականության վրա ներազդեցության լծակներից¹⁰:

Հատկապես կարևոր էր 1961 թ. Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն ստեղծված և հետագա տարիներին առավել նշանակալից դարձած Ազգային անվտանգության խորհրդի գործունեությունը: ԱԱԽ-ի լիազորությունների մեջ էր մտնում անվտանգության քաղաքականության համակարգումը և իր առաջարկությունների մասին կառավարությանը տեղեկացնելը¹¹: 1971 թ. հետո ԱԱԽ-ի դերակատարումն ընդլայնվեց, քանի որ որպես դրա գործառույթ սահմանվեց ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ կառավարությանը խորհրդակցություն տրամադրելը: Անվտանգության քաղաքականության ընդհանուր համակարգման փոխարեն ԱԱԽ-ն առավել մեծ ժամանակ էր տրամադրում արտաքին քաղաքականության վերաբերյալ տարբերակների մշակմանը: 1974 թ. ներխուժումը Կիպրոս ցույց տվեց, որ ԱԳՆ-ն, ԱԱԽ-ն և ՋՈՒ ԳԾ-ն սերտ համագործակցել են տարբեր ոլորտներում: Կիպրոսի հյուսիսային հատվածի զավթմամբ աննախադեպ ակտիվություն ցուցաբերեցին նաև հանրությունը, ՋԼՄ-ները և քաղաքական կուսակցությունները: 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո ԱԱԽ-ի դերն էլ ավելի աճեց, որով ամրագրվեց ԱԱԽ-ի կողմից գործող կառավարությանը տրվող որոշումներին, կարծիքներին, դիտարկումներին տալ առաջնահերթություն:

1980-ական թթ. քաղաքական դաշտի գլխավոր անձը Թուրգութ Օզալն էր, ով հիմք դրեց միանգամայն այլ ձևի ու բովանդակության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ժամանակաշրջանի: 1920-70-ական թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական դերակատարների միջև գրեթե հիմնականում եղել է միատարրություն և համաձայնեցված գործողություններ, թեև 1980-ական թվականների վերջին և 1990-ականներին արտաքին և

¹⁰ U. Uzer, *Identity and Turkish Foreign Policy: The Kemalist Influence in Cyprus and the Caucasus*, London, I. B. Tauris, 2010, p. 77.

¹¹ S. Balkan, A. E. Uysal and K. H. Karpat, նշվ. աշխ., հոդված 111.

պաշտպանական քաղաքականության հիմնական դերակատարների միջև տարակարծությունները և հարաբերությունների կտրուկ վատթարացումները, մեկմեկու նկատմամբ վերահսկողության սահմանման դրսևորումները դարձան առավել տարածված: Հետևաբար, փոխվեցին նաև արտաքին քաղաքականության երբեմնի միատարրության և համաձայնեցված գործունեության նախկին մեխանիզմները:

Այս տասնամյակում ավելացան նաև այնպիսի դերակատարներ, որոնք նախկինում կամ չկային կամ ունեին ոչ այնքան առանցքային դերակատարում: Այս առումով կարևոր էր 1990-ականների սկզբներին հիմք դրված նավթային ծրագրերի մեկնարկը, որը առաջնային պլան մոդեց Թուրքական վառելիքային կազմակերպությանը (TPAO), վառելիքամղային կազմակերպությանը (BOTAS): Այս կազմակերպություններն սկսեցին ակտիվորեն ներգրավվել հատկապես Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ 1990-ական թթ. արտաքին քաղաքականության ռազմավարական ուղղությունների մշակման գործերում¹²:

Թուրքիայի ԱԳՆ-ի ներքին կանոնադրության 1173-րդ հոդվածը նշում է, որ արտաքին քաղաքականության համակարգումը դրված է ԱԳՆ-ի վրա, սակայն, ինչպես ցույց տվեցին 1980-1990-ական թթ., արտաքին քաղաքականության որոշ ոլորտներ ԱԳՆ-ն անկարող էր համակարգել ըստ անհրաժեշտության: Այսպիսով, ոչ պետական դերակատարները, ինչպես օրինակ բիզնես հանրությունը, արհեստակցական միությունները, համալսարանները, ՀԼՄ-ները և հանրային կարծիքը ժամանակ առ ժամանակ էական ազդեցություն են ունենում արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների կայացմանը¹³:

1987 թ. Թուրքուր Օզալն սկսեց առավել ակտիվորեն ներգրավվել արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում: 1989 թ. հետո, երբ նա ընտրվեց նախագահ, արտաքին քաղաքականության հարցերում, ըստ էության, զինվորականությանը մոդեց լուսանցքային դաշտ: Ավելին, 1989-91 թթ., ունենալով Մեսուր Յըլմազի աջակցությունը, Օզալը աննախադեպ ակտիվություն ցուցաբերեց արտաքին քաղաքա-

¹² F. Tayfur and K. Göymen, Decision Making in Turkish Foreign Policy, Middle Eastern Studies, 2002, v. 38. No. 2, p. 108.

¹³ U. Uzer, նշվ. աշխ., էջ 76:

կանության գործընթացներում: Թուրքիան առանցքային դերակատարում ունեցավ Ծոցի պատերազմի ընթացքում, որի փաստն ինքնին առաջ բերեց զինվորականության խիստ արձագանքը: Արդյունքում, գերազանցապես արտաքին քաղաքականության հարցերում ունեցած տարբերության պատճառով, ԶՈՒ Գլխավոր շտաբի պետ Թորումթայը հրաժարական ներկայացրեց, որն աննախադեպ իրադարձություն էր Թուրքիայում: 1991 թ. ընտրություններում Օզալի կողմից երբեմնի ղեկավարած Մայր հայրենիք կուսակցությունը պարտություն կրեց, և վարչապետ դարձավ Դեմիրելի քաղաքական բեմերը բավական սահմանափակեց Օզալի միանձնյա կառավարման դրսևորումները: Օզալ-Դեմիրել քաղաքական հակասությունների հետևանքով՝ արտաքին քաղաքականության հարցերում Օզալի լծակները նվազեցին: Դա առավել ցցուն դարձավ 1991-93 թթ. ընթացքում, երբ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Թուրքիայի ունեցած դիրքորոշման դրսևորումները տարբերվում էին 1989-91 թթ. արտաքին քաղաքականության այլ համարձակ նախաձեռնություններից: Օզալ-Դեմիրել հակասություններից օգտվեց նաև զինվորականությունը և, հատկապես 1993 թ. ապրիլից հետո, երբ Օզալը հանկարծամահ եղավ, զինվորականները սկսեցին վերագտնել նախկին լծակները և ընդգծված ակտիվություն ցուցաբերել ոչ միայն ներքաղաքական, այլ նաև արտաքին քաղաքականության մշակման և իրականացման հարցերում¹⁴: Դրա պատճառները մի քանիսն էին, որոնցից առավել կարևոր էին ներքաղաքական անկայուն իրավիճակը, աշխարհիկ-իսլամական գաղափարախոսությունների միջև խորացող հակամարտությունը, ՔԲԿ-ի դեմ ահագնացող պայքարը, ֆինանսատնտեսական ճգնաժամային դրսևորումները, իրարահաջորդ կռաւիցիոն կառավարությունները, որոնք կառավարությունների ղեկավարներին հնարավորություն չէին տալիս արտաքին քաղաքականությանը ամբողջական ուշադրություն հատկացնել:

1990-ական թթ. առաջ եկան նոր էթնիկ ու ազգային լոբինգային խմբեր ևս (ադրբեջանական, բոսնիական, չեչենական և այլն), որոնք նախկինում գոյություն չունեին: Այս առումով Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հետխորհրդային տարածքում (Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա)

¹⁴ S. Larrabee and I. Lesser, Turkish Foreign Policy in an Age of Uncertainty, RAND, 2003, p. 28.

վա), Ռումինիայում, Ռուսաստանում, Չինաստանում, Բուլղարիա բալկանյան ուղղություններում սկսեց կրել նաև նորաստեղծ էթնիկ լոբինգային խմբերի ազդեցությունը, որը նոր երևույթ էր Թուրքիայի արտաքին քաղաքականության կազմակերպման տեսանկյունից: Իհարկե, էթնիկ հիմքերով գործող լոբինգային խմբերից ոչ բոլորն ունեցան այնպիսի հաջողություն ինչպիսին ադրբեջանականն էր¹⁵: Պատերազմական գործողությունների հենց սկզբից՝ 1992 թ. հունվար-փետրվար ամիսներին, Թուրքիայում հանրային կարծիքը շատ արագ դարձավ ընդգծված հակահայկական¹⁶: Այլ խոսքերով, ադրբեջանական էթնիկ լոբինգային խմբերը, հենվելով թուրքերի հետ ունեցած մշակութային և էթնիկ ընդհանրությունների վրա, կարողացան ձևավորել միակողմանի հանրային կարծիք, որն էլ էապես ազդեց իշխանական վերնախավի վրա ընդհանրապես, և Արցախյան հակամարտության նկատմամբ Թուրքիայի դիրքորոշման հարցում մասնավորապես: 1992 թ. փետրվարին Խոջալուի կրակակետերի վերացման ժամանակ տեղի ունեցած դեպքերը և Ադդամի մատույցներում սպանված խոջալուի բնակիչների և հատկապես թուրք-մեսիթերների պատմությունը Թուրքիայում տարածվեց գերազանցապես համաձայն ադրբեջանական քարոզամեթոդային ներկայացրած շեշտադրումների¹⁷: Պաշտոնական Անկարան դատապարտեց նաև Շուշիի և Բերձորի ազատագրումը, սակայն Թուրքիայի քայլերը Հայաստանի հասցեին հնչող սուր քննադատական հայտարարություններից այն կողմ չանցան: Ադրբեջանի կողմից լայնածավալ հարձակման ժամանակ Թուրքիան հասկանալիորեն հանդես չեկավ ոչ մի հայտարարությամբ: 1993 թ. Քարվաճառի գործողությունը դարձավ այն եզրագիծը, որից հետո Թուրքիայի իշխանություններն անկարող եղան սահմանափակվել բացառապես կոշտ քննադատությամբ: Հանրային ճնշման ներքո Թուրքիան անցավ վճռական գործողությունների և վերջնականապես փակեց Հայաստանի հետ սահմանի գործող երկու սահմանակետերը, որոնք գործում էին հատուկ ռեժիմով 1991թ. ի վեր:

¹⁵ Նույն տեղում, էջ 35:

¹⁶ U. Uzer, նշվ. աշխ, էջ 172-173:

¹⁷ Վ. Տեր-Մաթևոսյան, Խոջալուի դեպքերը ադրբեջանաթուրքական հարաբերություններում: Գնահատումներ Հայաստանի ազգային անվտանգության տեսանկյունից, Աշխատանքային տետրեր, 2009, հ 2, թ. 10, էջ 103-114:

Տարիներ անց նույնպես, երբ 2008-2009 թթ. Շվեյցարիայի միջնորդությամբ փորձ արվեց կարգավորելու հայ-թուրքական հարաբերությունները, Թուրքիայի հանրությունը նախապես լինելով դրական տրամադրված, շեշտակիորեն փոխեց վերաբերմունքը Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցի վերաբերյալ, երբ ադրբեջանական քաղաքական և արդեն տնտեսական լոբինգային խմբերը լայնածավալ հարձակում սկսեցին Թուրքիայում: Այլ կերպ, թուրքական ԶԼՄ-ների, քաղաքացիական հասարակության, փորձագիտական հանրության արտաքին քաղաքականության վրա ունեցած ազդեցությանը 1990-ին ավելացան էթնիկ ազդեցության խմբերը, որոնք, ինչպես ադրբեջանական պարագան ցույց տվեց, ունեին մի քանի ենթախմբեր (քաղաքական, տնտեսական և մշակութային), որն էլ 1990-2000-ական թթ. համացանցի տարածմանը զուգահեռ դարձավ առավել կարևոր գործոն արտաքին քաղաքական այս կամ այն հարցի շուրջ հանրային կարծիքը համախմբելու համար:

1993 թ. ի վեր նախագահներ Սուլեյման Դեմիրելը, Ահմեդ Նեջդեթ Սեզերը և Աբդուլլահ Գյուլն ունեցել են արտաքին քաղաքականության մեջ ներգրավման տարաբնույթ ձևաչափեր: Թե՛ Դեմիրելը, թե՛ Գյուլը բավական ակտիվորեն ներգրավված են եղել արտաքին քաղաքականության իրականացման գործում, մինչդեռ Ահմեդ Նեջդեթ Սեզերը բավական պասիվ էր արտաքին քաղաքականության հարցերում: Դեմիրելը, որը երկրի նախագահն էր մինչև 2000 թ., ուներ բավական զգալի քաղաքական փորձ: Դեռ 1960-ական թթ. ակտիվ քաղաքականության մեջ կարևոր հետագիծ թողած Դեմիրելը 7 անգամ եղել է վարչապետ, հետևաբար նա ձգտում էր առավելագույնս միատեղել վարչապետության նախկին փորձը և նախագահի լիազորությունները: Դրան գումարվում էին նաև ներքաղաքական անկայունության ալիքները, որոնք հնարավորություն տվեցին, որպեսզի նախագահը ևս ներգրավվի ակտիվ քաղաքականության մեջ: Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Սեզերը, որը նախագահեց մինչև 2007 թ., ակտիվ քաղաքականության մեջ նորելուկ էր, չէր տիրապետում արտաքին քաղաքականության այն փորձին, որն ունեին նրան նախորդած երկու նախագահները: Մինչդեռ 2007 թ.-ից նախագահ դարձած Աբդ. Գյուլը ապրել էր արտերկրում, ուներ արտաքին տնտեսական գործակցության փորձ: Ավելին, լինելով Բարձրություն կուսակցության անդամ, 1996 թ. Գյուլը զբաղեցրել էր

Թուրքիայի օրենսդիր մարմնի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Հանրային կարծիքը ևս, ոչ հաճախ, սակայն որոշ դեպքերում բավական առանցքային դեր է ունեցել արտաքին քաղաքական զարգացումների վրա: Թեև իշխանությունները միշտ չէ, որ հաշվի են նստում հանրային կարծիքի հետ, սակայն, որոշ դեպքերում, հատկապես ընտրությունների ժամանակ հասարակությունը որոշակի վերաբերմունք էր դրսևորում արտաքին քաղաքական խնդիրների վերաբերյալ:

Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման գործում կարևոր դերակատարում են ստանձնել նաև գիտահետազոտական ինստիտուտները, վերլուծական կենտրոնները (think-tanks)¹⁸, որոնք գործում են կամ արտաքին գործերի նախարարության կամ համալսարանների հովանու ներքո: Այս կենտրոններից շատերը Եվրոպայի քաղաքական և տնտեսական կենտրոններում և Վաշինգտոնում ունեն ներակայացուցչություններ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում Թուրքիայի վերաբերյալ գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացմանը¹⁹:

Թուրքիայից դուրս ապրող թուրքերը և Թուրքիայի քաղաքացիները ևս 1960-70-ականներից սկսած էական ազդեցություն են ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության իրենց բնակության երկրների վերաբերյալ քաղաքականության մշակման և իրականացման գործում: Օրինակ, Եվրոպայում ապրող թուրքերն սկսել են ավելի ինտենսիվ կերպով ներգրավվել Թուրքիայի հետ հարաբերություններում, առաջ մղել Թուրքիայի շահերը, թեև ոչ բոլոր երկրներում է դա ստացվում: Օրինակ, հակառակ այն համընդհանուր պնդմանը, որ Գերմանիայում ապրող Թուրքիայի քաղաքացիները ներկայացնում են Թուրքիայի շահերը, նպաստում են Թուրքիայի քաղաքական օրակարգի առաջմղմանը, իրականում, Գերմանիայում ապրող

¹⁸ S. Larrabee & I. Lesser, նշվ. աշխ., էջ 32:

¹⁹ Այդպիսի վերլուծական կենտրոններից են OSRAM (Մերձավոր Արևելքի ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), STRATIM (Ռազմավարական հաղորդակցության կենտրոն), EPC (Եվրոպական քաղաքականության կենտրոն), SAM (Ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոն), IPC (Ստամբուլի քաղաքական կենտրոն), SETA (Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ), TESEV (Թուրքիայի տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների հիմնադրամ):

և հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ Թուրքիայի ներկա կամ նախկին քաղաքացիները գերազանցապես քրդեր են, ալևիներ, կամ քուրդ-ալևիներ, իսկ թուրքերի մեծ մասն էլ քննադատական մոտեցում ունի Թուրքիայի իշխանությունների նկատմամբ: Այս առումով փոխվել են նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության Սփյուռքի հետ տարվող աշխատանքները: Օրինակ, 1970-ականներից ի վեր, Թուրքիան մզկիթների սպասավորներ էր ուղարկում Եվրոպա՝ մզկիթներում աշխատելու և կրոնական ծառայություններ մատուցելու համար, 1990-ական թթ.-ից սկսած առավել ընդլայնվեցին թե՛ գործառության, թե՛ աշխարհագրական առումներով: Կրոնի գործերի վարչությունը, որը գործում է վարչապետին կից, դարձել է Թուրքիայի ամենամեծ բյուրոկրատական ինստիտուտը, քանի որ դրա աշխատակիցները համարվում են պետական ծառայողներ և արտերկրում կրոնական գործերի կարգավորման հետ միասին համակարգում են նաև այլ, գերազանցապես եվրոպական տվյալ քաղաքում, մարզում ապրող համայնքի գործունեությունը, հորդորում զբաղվել թուրքանպաստ գործունեությամբ, ընդլայնել քաղաքական ներկայացվածությունը բնակության երկրներում և այլն: Եվրոպայում բնակություն հաստատած թուրքերից բացի էական նշանակություն էր տրվում Իրաքում, Սիրիայում ապրող թուրքմենների հետ տարվող աշխատանքներին, որոնք դառնում էին նաև լծակ Թուրքիայի իշխանությունների ձեռքերում այդ երկրների հետ հարաբերությունների կարգավորման ժամանակ:

Գյուլենական կրթահամալիրները ևս էական դերակատարում են ունեցել Թուրքիայի արտաքին քաղաքականության «մեղմ ուժի» բաղադրիչի տարածման գործընթացում: Իհարկե, ժամանակ առ ժամանակ Ֆեթ. Գյուլենի և Թուրքիայի իշխանական քաղաքական վերնախավի միջև ծագել են հակասություններ, սակայն, ընդհանուր առմամբ, այդ կրթահամալիրների շրջանավարտները դառնում են լեզվի կրողներ, համարվում են թուրքական արժեքային սկզբունքների ջատագովներ: Այդ կրթահամալիրների շրջանավարտները աշխատանքի շուկայում համարվում են մրցունակ անձինք, որոնք 1990-ական թթ. աստիճանաբար ավելացնում են նաև ներկայացվածությունը քաղաքական համակարգի տարբեր ոլորտներում: Գյուլենականները ներթափանցել էին նաև իրավական համակարգ, զինված ուժեր, արտաքին քաղաքական գերատեսչություն՝

փորձելով ազդել Թուրքիայի արտաքին քաղաքականության որոշումների կայացման գործընթացի վրա:

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը տասնամյակներ շարունակ կենտրոնական դեր է կատարել ոչ միայն արտաքին աշխարհում Թուրքիայի շահերի ներկայացման, այլ նաև՝ ներպետական կյանքում: Տասնամյակներ շարունակ դիվանագիտական կորպուսը թուրք բարձրաստիճան զինվորականների, դատաիրավական համակարգի մտավորական ներկայացուցիչների հետ միասին համարվել է քեմալական վերնախավը: Ավելին, տասնամյակներ շարունակ արտաքին գործերի նախարարությունը Թուրքիայի քաղաքական և իշխանական համակարգում մշտապես ընկալվել է որպես «ընտրախավային հաստատություն», «ընտրախավ ընտրախավի մեջ», «բյուրոկրատական կատարելության կենտրոն»: ԱԳՆ-ն համարվում էր նաև դժվար հասանելի հաստատություն, քանի որ այն ուներ նաև ամենադժվար ընդունելության քննությունները: Երկար տարիներ Թուրքիայի միայն մեկ բուհի՝ Անկարայի համալսարանի շրջանավարտները կարող էին մասնակցել ԱԳՆ-ի ընդունելության քննություններին և անցնել դիվանագիտական աշխատանքի: Տասնամյակներ շարունակ հատուկ ուշադրություն է հատկացվել նաև դիմորդների ընտանեկան պատմություններին: Ինչպես զինվորականության պարագայում՝ ԱԳՆ-ում ևս պահանջում էին դիմորդների ընտանեկան լուսանկարները ստուգելու համար, թե արդյոք դիմորդների ընտանիքի անդամները եղել են կրոնական հավատացյալներ: Համընդհանուր համոզմունքը նաև այն էր, որ դիվանագետը և կրոնամոլությունը անհամատեղելի են: Բյուրոկրատական ապարատի համար այս հանգամանքն ուներ էական նշանակություն, դիվանագետները, դեսպանները համարվում էին բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք գործադրում էին օսմանյան ժամանակահատվածից ժառանգած աշխատանք:

Տասնամյակներ շարունակ արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում կիրառված մեխանիզմներին վերջին տարիներին ավելացան նորերը: Այս հանգամանքի շնորհիվ արտաքին քաղաքականության իրականացման գործիքակազմը դարձավ առավել բազմազան: Այդ առումով հարկ է առանձնացնել արտաքին առևտրի գործոնը, որի շնորհիվ որոշ վերլուծաբաններ Թուրքիային սկսեցին անվանել «առև-

տրային պետություն»²⁰: Եթե 1975 թ. արտաքին առևտուրը կազմում էր Թուրքիայի ՀՆԱ-ի ընդամենը 9 %-ը (6.1 մլրդ. ԱՄՆ դոլար), ապա 33 տարի անց՝ 2008 թ., այն ավելացել էր ավելի քան 5 անգամ, հասնելով 42 %-ի (333 մլրդ. ԱՄՆ դոլար)²¹: Ի հավելումն առևտրային գործունեության՝ պակաս նշանակալից չեն նաև թուրքական բիզնես կազմակերպությունների գործունեության ընդլայնումը և արտաքին ուղղակի ներդրումների ծավալների շեշտակի աճը: Առաջինի առումով հարկ է նշել, որ 1972-2010 թթ. ընկած ժամանակահատվածում թուրքական 5900 կազմակերպությունների կողմից արտերկրում իրականացրած ծրագրերի ընդհանուր գումարը կազմում է 187 մլրդ. ԱՄՆ դոլար, իսկ արտաքին ուղղակի ներդրումների ծավալը 2001 թ. 890 մլն. ԱՄՆ դոլարից 2009 թ. հասել էր 5.3 մլրդ-ի²²:

Թուրքիայի արտաքին քաղաքականության բազմազանեցմանը նպաստող գործոններից էին նաև դեպի Թուրքիա մարդկանց այցելությունների թվի աճը: Եթե 1991 թ. անմիջական հարևան երկրներից Թուրքիա մուտք էր գործել ընդամենը 2,5 մլն մարդ, ապա 2010 թ. այդ թիվը հասավ մոտ 11 մլն-ի: Դեպի Թուրքիա մարդկանց այցը խթանող գործոններից էր Թուրքիայի կառավարության կողմից մուտքի արտոնագրերի ազատականացման քաղաքականության կիրառումը և ազատ առևտրային գոտիների գործարկումը²³: Այս քաղաքականության շնորհիվ արտագաղթի բարձր ցուցանիշներ ունեցող երկրից Թուրքիան վերածվեց ներգաղթի երկրի: Արդյունքում, Թուրքիա տեղափոխված մարդկանց մեծ մասը, ներգրավված լինելով զանազան ծառայությունների ոլորտներում, իրենց ծագման երկիր սկսեցին ուղարկել դրամական փոխանցումներ, որոնց ծավալները ևս էապես աճել են վերջին տարիների ընթացքում: Մարդկանց տեղաշարժին նպաստող գործոններից է նաև տուրիզմի ենթակառուցվածքային զարգացումը: Հիշյալ գործոնների համադրմամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ 2014 թ. Թուրքիան վեցերորդն էր աշ-

²⁰ Kemal Kirişci, *The Transformation of Turkish Foreign Policy: The Rise of the Trading State*, New Perspectives on Turkey, 2009, v. 40, pp. 29-57.

²¹ Kemal Kirişci, *Turkey's Engagement with its Neighborhood: A "Synthetic" and Multidimensional Look at Turkey's Foreign Policy Transformation*, Turkish Studies, 2012, v. 13, n. 3, p. 321.

²² Նույն տեղում, էջ 322:

²³ Նույն տեղում, էջ 322-323:

խարհում ամենաշատ այցելությունների թվով՝ 37,8 մլն. այցելու, որը 5,9-ով ավելին էր քան 2013 թ.²⁴:

Տնտեսական ազդեցության աճին զուգահեռ Թուրքիայի իշխանությունները առանձնահատուկ կարևորություն են հատկացրել կրթական, կրոնական, մշակութային ու հումանիտար քաղաքականությանը և հասարակական մակարդակում Թուրքիայի վերաբերյալ արտերկրում դրական վերաբերմունքի ձևավորմանը: Տասնյակ երկրներում Թուրքիայի կառավարությունը սկսեց ձևավորել կրոնազաղափարական և մշակութային ազդեցության տարածման լծակներ, որոնց աշխատանքները համակարգում են Թուրքիայի վարչապետին կից երեք պետական հաստատություններ՝ «Համագործակցության և համակարգման թուրքական գործակալությունը» (*Türkiye İşbirliği ve Kalkınma İdaresi - TİKA*), «Յունուս Էմրե մշակութային կենտրոնները» և Կրոնի գործերի նախագահությունը (*Diyanet*)²⁵:

TİKA-ն ծրագրեր է իրականացնում 48 երկրներում գործող 50 գրասենյակների միջոցով: 2002 թ. մինչև 2011 թ. իրականացվող ծրագրերի բյուջեն աճել է 14 անգամ՝ 85 մլն. ԱՄՆ դոլարից հասնելով 1,273 մլրդ.-ի: Այն իրականացնում է հումանիտար, կրթական և տեխնիկական-տեղեկատվական աջակցություն մեծ թվով երկրների գերազանցապես իսլամադավան համայնքներում: Թուրքիայի իշխանությունները 2007 թ. որոշեցին հիմնել «Յունուս Էմրե թուրքական մշակութային կենտրոնները», որոնց նպատակն էր հավասարակշռել, որոշ առումով փոխարինել գյուլենական դպրոցների ազդեցությունը՝ հետևելով գերազանցապես լեզվի, գրականության, Թուրքիայի պատմության, մշակույթի և արվեստի տարածման նպատակ: Այս կենտրոնները ստեղծվել են Գյոթեի ինստիտուտի, Բրիտանական խորհրդի, Սերվանտեսի ինստիտուտի և նմանատիպ այլ հաստատությունների օրինակով²⁶: Ներկայումս այն 33 երկրնե-

²⁴ The world's most visited countries – 2014, <http://www.telegraph.co.uk/travel/travelnews/11027765/The-worlds-most-visited-countries-2014.html?frame=3003408>

²⁵ Առավել մանրամասն տե՛ս Kerem Öktem: Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations in Another Empire? A Decade of Turkey's Foreign Policy under the Justice and Development Party, eds. Kerem Öktem, Ayşe Kadioglu and Mehmet Karsli, Istanbul, Bilgi University Press, 2012, pp. 77-108.

²⁶ Ayhan Kaya, Yunus Emre Cultural Centers: The AKP's Neo-Ottomanism and Islamism, <http://www.tr.boell.org/web/51-1725.html>

րում ունի գործող գրասենյակներ²⁷։ Երրորդ պետական հաստատության՝ Կրոնի գործերի նախագահության (ԿԳՆ) գործունեությունն արտերկրում ընդգրկում է մի քանի ոլորտներ, որոնք գերազանցապես առնչվում են կրոնական և հոգևոր խնդիրներին։ ԿԳՆ-ն տրամադրում է օգնություն դեպի Մերքա ուխտագնացության կազմակերպման, մզկիթներում քարոզիչների՝ իմամների ուսուցման, աստվածաբանների պատրաստման, հետբուհական կրթության նպատակով կրթաթոշակների տրամադրման, իսլամական գրականության տարածման առումներով, ԿԳՆ-ն համակարգում է նաև մզկիթների վերանորոգման, նորերի կառուցման գործում ֆինանսական և խորհրդատվական օժանդակության տրամադրումը²⁸։

Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործում վերջին տարիներին ոչ պակաս կարևոր դերակատարում են ստանձնել ոչ-կառավարական կազմակերպությունները, որոնք սերտորեն համագործակցում են պետական հաստատությունների հետ և գործում միևնույն քաղաքականության ծիրում։ Վերջիններիս գործունեության ոլորտներն ընդգրկում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Թուրքիայի առևտրատնտեսական և բիզնես շահերի խթանումը և երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների զարգացումը, թուրքերեն լեզվի և թուրքական մշակույթի խթանումը, մի շարք երկրներում ժողովրդավարության և բարեփոխումների օրակարգի մշակումը, հումանիտար աջակցությունը, կանանց իրավունքների պաշտպանությունը և այլն։ Այս կազմակերպությունների գործունեության ֆինանսական, տնտեսական և խորհրդատվական հիմնական շահառուները Մերձավոր Արևելքի, Աֆրիկայի, Բալկանների, Հեռավոր Արևելքի տարածաշրջանների իսլամադավան շրջաններն ու համայնքներն են։ Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Թուրքիայից դուրս ակտիվ գործունեություն ծավալած ոչ-կառավարական կազմակերպություններից մի քանիսին՝ ըստ գործունեության ոլորտների։

²⁷ Yunus Emre Enstitüsü - <http://www.yee.org.tr/>

²⁸ Şenol Korkut, The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War, Acta Slavica Iaponica, 2010, Tomus 28, pp. 117–139

Գործունեության ոլորտը	Կազմակերպության անվանումը	Գործունեության վերաբերյալ մանրամասներ
Բիզնես և առևտրատնտեսական կապեր	Անկախ արդյունաբերողների և գործարարների ընկերակցություն (MUSIAD - Müstakil Sanayici ve İşadamları Derneği) ²⁹ (հիմն. 1990 թ.)	Ներկայացուցչական գրասենյակներ ունի 32 երկրներում: Հատկապես ընդլայնված է Գերմանիայում գործող ցանցը, որը ներկայացուցիչներ ունի 10 քաղաքում:
	Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունների խորհուրդ (DEİK - Dış Ekonomik İlişkiler Kurulu) ³⁰ (հիմն. 1986 թ.)	Ներկայացուցչություններ ունի 121 երկրում, որոնք գործում են «բիզնես խորհուրդ» անվան ներքո:
	Թուրքիայի արտահանողների համաժողով (TIM – Dış İhracatçılar Meclisi) ³¹ (հիմն. 1993 թ.)	Միավորում է արտահանմանը միտված թուրքական 52,000 կազմակերպությունների՝ համաձայն 26 ոլորտների: Նպատակն է խթանել համակարգման ծավալները՝ 2023 թ. հասցնելով 500 մլրդ. ԱՄՆ դոլարի (2010 թ. 135 մլրդ. ԱՄՆ դոլարից):
	Թուրքական առևտրային պալատների և բորսաների միություն (TOBB – Türkiye Odalar ve Borsalar Birliği) ³² (հիմն. 1950 թ.)	Նպատակն է խթանել մասնավոր հատվածի գործունեությունը: Գրասենյակներ ունի մոտ 20 առաջատար միջազգային և

²⁹ Müstakil Sanayici ve İşadamları Derneği <http://www.musiad.org.tr/tr-tr>

³⁰ Dış Ekonomik İlişkiler Kurulu - <http://www.deik.org.tr/>

³¹ Dış İhracatçılar Meclisi - <http://www.tim.org.tr/tr/default.asp>

³² Türkiye Odalar ve Borsalar Birliği - <http://www.tobb.org.tr/Sayfalar/Ana-Sayfa.php>

		ազգային առևտրային կազմակերպություններում:
	Թուրքական արդյունաբերողների և գործարարների ընկերակցություն (TUSIAD – Türkiye Sanayiciler ve İşadamları derneği) ³³ (հիմն. 1971 թ.)	Միավորում է արդյունաբերության և ծառայությունների ոլորտի 3500 կազմակերպությունների: Ներկայացուցչական գրասենյակներ ունի Բրյուսելում, Վաշինգտոնում, Բեռլինում, Փարիզում և Պեկինում, ինչպես նաև անդամակցում է մի շարք միջազգային առևտրատնտեսական կազմակերպությունների:
Հումանիտար աջակցություն	Մարդկանց իրավունքների, ազատությունների և հումանիտար աջակցության հիմնադրամ (IHH – İnsan Hak ve Hürriyetleri ve İnsani Yardım Vakfı) (հիմնվ. 1992 թ.)	Գրասենյակներ աշխարհի 135 երկրներում: Ծառայությունների մատուցում կրթության, սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտներում: Դպրոցների, հիվանդանոցների մզկիթների կառուցում և վերակառուցում, տարբեր երկրներում ապրող մուսուլմանների վերաբերյալ զեկույցների պատրաստում:

³³ Türkiye Sanayiciler ve İşadamları derneği - <http://www.tusiad.org.tr/>

	Կապույտ կիսալուսնի աջակցության և զարգացման հիմնադրամ (Uluslararası Mavi Hilal İnsani Yardım ve Kalkınma Vakfı) (հիմն. 1999 թ.)	Համայնքային զարգացման, բնակարանաշինական և առողջապահական ծրագրեր է իրականացնում 11 երկրներում:
Կրթական	Մոր և մանկան կրթական հիմնադրամ (AÇEV – Anne Çocuk Eğitim Vakfı) ³⁴ (հիմն. 1993 թ.)	Կրթական ու վերապատրաստման դասընթացներ է իրականացնում Եվրոպայի և Մերձավոր Արևելքի 12 երկրների կարիքավոր ընտանիքների երեխաների և կանանց համար:
Կանանց հիմնախնդիրներ	Կանայք հանուն կանանց մարդկային իրավունքների (Kadının insan hakları) ³⁵ (հիմն. 1993 թ.)	Կանանց իրավունքների պաշտպանության իրականացում իսլամադավան պետություններում:

«Փափուկ ուժի» միջոցով իրականացվող արտաքին քաղաքականության գործընթացում վերջին տարիներին կարևոր դեր է կատարում նաև հանրային մշակույթը: Որոշ ուսումնասիրողների կարծիքով Թուրքիայում նկարահանված և աշխարհի մոտ 100 երկրում ցուցադրված հեռուստասերիալները ոչ պակաս կարևոր ազդեցություն են թողել Թուրքիայի ազդեցության տարածման գործում³⁶: Այդ ոլորտում կատարված աշխատանքի և պետական աջակցության շնորհիվ Թուրքիան դարձավ հեռուստասերիալներ արտահանող երկրորդ երկիրը՝ զիջելով միայն ԱՄՆ-ին: Միայն 2012 թ. հեռուստասերիալների արտահանումից ստացված եկամուտը կազմել էր 200 մլն.

³⁴ Anne Çocuk Eğitim Vakfı, <http://www.acev.org/>.

³⁵ Kadının insan hakları, <http://www.wwhr.org/>.

³⁶ Kerem Oktem, Projecting Power: Non-conventional Policy Actors in Turkey's International Relations, in Another Empire: A decade of Turkey's Foreign Policy Under the Justice and Development Party, ed. Kerem Oktem, Ayşe Kadioğlu and Mehmet Karli. Istanbul, Istanbul Bilgi University Press, 2012. pp. 98-101.

ԱՄՆ դոլար, որը 2004 թ. կազմում էր ընդամենը 10,000 ԱՄՆ դոլար³⁷: Հատկապես, Güneş (Մերձավոր Արևելքում «Noor», իսկ Բուլղարիայում «Perla»), «Օտարազգի փեսան» (Yabancı Damat), «Հազար ու մի գիշեր» (Binbir Gece) «Ezel», «Menekşe ile Halil», «Fatmagül», «Բախտ» (Kismet), «Կյանքը շարունակվում է» (Haya Devam Ediyor), «Հրաշալի դարը» (Muhteşem yüzyıl) հեռուստասերիալները Մարոկոյից մինչև Մալազիա ապահովել են մեծ հեռուստալսարան, որոշ դեպքերում հասնելով մինչև 200 մլն. հեռուստադիտողի: Ուսումնասիրողների կարծիքով, որոշ հեռուստասերիալներ հեղափոխական դերակատարում են ունեցել արաբական աշխարհում ընտանեկան և մարդկային հարաբերությունների վրա, ինչպես նաև կանանց իրավունքների վերաիմաստավորման առումով, դրանով հանդերձ խթանելով Թուրքիայի, թուրքական մշակույթի և թուրքական նմուշաձևի վերաբերյալ դրական ընկալման ձևավորմանը³⁸:

**ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՌՈՒՑՎԱԾ-
ՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2002-2012 ԹԹ.**

2002 թ. նոյեմբերյան ընտրություններում հաղթեց Արդարություն և զարգացում կուսակցությունը, որը հիմնադրվել էր ընդամենը 14 ամիս առաջ: Կուսակցությանը հաջողվեց ստանալ քվեների 34 տոկոսը, որն աննախադեպ ցուցանիշ էր 1990-ական թթ. կռիվից հետո կառավարությունների համատեքստում: Նոր իշխանության առաջնային նպատակներից մեկը դարձավ եվրոպական և արևմտյան գործընկերին վստահեցնել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ էական շրջադարձեր չեն սպասվում, ավելին, Թուրքիան շարունակելու է մնալ Եվրամիության անդամակցության հավատարիմ պետություն և շարունակելու է իր ստանձնած պարտականությունների իրականացումը: Վարչապետի պարտականությունը ստանձնեց Աբդուլահ Գյուլը, մինչև Էրդողանը՝ կուսակցության իրական առաջնորդը, կստանձնեք կառավարության ղեկը 5 ամիս անց:

³⁷ Turkey world's second highest TV series exporter after US, <http://www.hurriyetdailynews.com/turkey-worlds-second-highest-tv-series-exporter-after-us.aspx?pageID=238&nID=73478&NewsCatID=345>.

³⁸ Kismet: How Soap Operas Changed the World, <http://www.aljazeera.com/programmes/witness/2013/11/kismet-how-soap-operas-changed-world-20131117152457476872.html>

Գյուլի ղեկավարած կառավարությունում արտաքին գործերի նախարարի պաշտոնը վստահված էր Յաշար Յաքըշին: Էրդոհանի վարչապետ դառնալուց հետո Արդ. Գյուլը նշանակվեց արտգործնախարար և փոխվարչապետ: Ա. Գյուլը պաշտոնավարեց մինչև 2007 թ. օգոստոս ամիսը, երբ Թուրքիայի օրենսդիրի կողմից ընտրվեց նախագահ: Արտգործնախարարի պաշտոնում Գյուլին փոխարինեց նրա կողմից հովանավորվող, մասնագիտությամբ տնտեսագետ Ալի Բաբաջանը: Վերջինս շարունակեց պաշտոնավարել մինչև 2009 թ. մայիսի 1-ը: 2009 թ. ապրիլյան ընտրություններն օգտագործելով որպես պատրվակ՝ Թուրքիայի վարչապետը պաշտոնանկ արեց Ա. Բաբաջանին և արտգործնախարար նշանակեց Ահմեթ Դավթոդյուլին:

Հարկ է նշել, որ 2007 թ. ի վեր, ԱԶԿ-ի և քեմալականների միջև հակասությունները դարձան առավել ակնհայտ, և Էրդոհանը դանդաղորեն սկսեց իրականացնել մի շարք քայլեր՝ նպատակ ունենալով սահմանափակել զինվորականների և դատական իշխանության ներկայացուցիչների, քեմալական արժեհամակարգի ավանդական մեկնաբանությանը հավատարիմ պահպանողական շրջանակների լիազորությունները և օրենսդրական իրավունքները: Այդ գործընթացի համար պահանջվեց առնվազն 7-8 տարի, և միայն 2010 թ. սեպտեմբերի 12-ին սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում հնարավոր եղավ էականորեն նվազեցնել նշված դերակատարների կողմից ԱԶԿ-ի դեմ քայլերի ձեռնարկման հնարավորությունը: Իհարկե, կար նաև արտաքին լծակների գործոնը, ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորությունների հարցը և միայն ԱԶԿ-ի գործոնով չէ, որ պայմանավորվեց քեմալականության դիրքերի սասանման գործընթացը: Այն սկսվել էր դեռ 1999 թ., երբ Թուրքիային շնորհվեց ԵՄ-ի թեկնածու երկրի կարգավիճակ: 1999-2002 թթ. Էջնիթի կռաւիցիոն կառավարությանն արդեն հաջողվել էր մի քանի օրենսդրական փոփոխություններ կատարել, որոնց շնորհիվ սկսվել էր մի գործընթաց, որը բերելու էր նաև քաղաքական դաշտում զինվորականության դերակատարման նվազեցման պահանջը: 2002-2010 թթ. ընթացքում ԱԶԿ-ն տարբեր մարտավարական հնարքներ գործադրելով, կարողացավ իրականացնել էական քայլեր: Հատկապես կարևոր էին Էրզենեքոնի ցանցի հայտնաբերումը և համանուն դատավարական գործընթացի մեկնարկը, տարանուն այլ չհաջողված ռազմական միջամտությունների

աղմկահարույց բացահայտումների փաստը և այլն: Այս քայլերի արդյունքում քեմալականությունը և դրա ավանդական հանրային ընկալման բնույթը էական փոփոխության ենթարկվեց:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական միտումները գնահատելիս կարող ենք նշել, որ ռազմավարական ուղեգծի փոփոխություն տեղի չի ունեցել, այլ փոխարենը կատարվել են առանձին երկրների ու տարածաշրջանային գործընթացների վերաբերյալ մարտավարական վերաձևակերպումներ: 2000-ական թթ. Թուրքիան որոշեց չմնալ հանդիսատեսի դերում և տարածաշրջանում ուժերի վերադասավորումներում ունենալ սեփական դերն ու նշանակությունը: Հետևաբար, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ԱԶԿ-ի կառավարման տարիներին կարելի է դիտարկել որպես առավելապես նոր մեթոդների կիրառմամբ նախկինում սահմանափակ հաջողություններ արձանագրած տարածաշրջաններում և միջազգային հարթակներում Թուրքիայի ազգային և պետական շահերի նորովի դիրքավորման հետևողական քաղաքականություն:

Ընդունված է կարծել, որ Արդարություն և զարգացում կուսակցության կողմից Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում դրված էր միայն «Ռազմավարական խորության» դոկտրինը, որը ենթադրում էր մասնակցություն տարածաշրջանային հակամարտությունների լուծմանը և տարածաշրջանում Թուրքիայի վարկի բարձրացում: Անշուշտ այն կարևորագույն հայեցակարգային և գաղափարախոսական մշակում էր, սակայն 2000-ական թթ. մասին խոսելիս հարկ է նշել նաև 1997-2002 թթ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայիլ Զեմի կողմից իրականացված մի շարք նոր ուղղությունների մասին: Իսմայիլ Զեմը, լինելով Բյուլենթ Էջևիրթի Ձախ ժողովրդավարական կուսակցության անդամ, Դավութօղլուի հետ միասին դիտվում է որպես հավասարաչափ կարևոր հետագիծ ունեցած արտգործնախարարներից ու տեսաբաններից մեկը: Սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության հետևորդ Զեմը արտաքին քաղաքական նախաձեռնություններում ևս փորձում էր մեկտեղել հասարակության զարգացման սոցիալ-դեմոկրատական մոդելները և 1990-ականներին բնորոշ միջազգային հարաբերությունների առանձնահատկությունները: Նրա «Թուրքիան նոր դարաշրջանում» գիրքը³⁹, որտեղ ամ-

³⁹ I. Cem, Turkey in the New Century, Mersin: Rustem Bookshop, 2001.

փոփված են նրա ելույթները, հարցազրույցները, մեկնաբանությունները և հիշողությունները մեծապես օգնում են հասկանալ նրա պատկերացումները միջազգային հարաբերությունների վերաբերյալ: Այս գրքում Ջեմն առաջ է քաշում Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր տեսլական՝ միևնույն ժամանակ քննադատելով Թուրքիայի նախորդ տասնամյակներում իրականացված դասական արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը: Նրա կարծիքով Թուրքիայի արտաքին քաղաքականությունը հանրապետության շրջանում աղճատվել էր մշակութային արժանատիներից և պատմական անցյալից: Այն պետք է փոխարինվի նոր մոտեցմամբ, որի հիմքում պետք է լինի այն գաղափարի գիտակցումը, որ Թուրքիայի ապագա միջազգային կարգավիճակը պետք է հենվի օսմանյան ժամանակահատվածից ժառանգված հարուստ ինքնության և պատմական ձեռքբերումների վրա⁴⁰: Համաձայն Ջեմի՝ Սառը պատերազմի ավարտը, գլոբալիզացիոն նոր երևույթները և տեխնոլոգիաների դարաշրջանը արտաքին քաղաքականության համար նոր հնարավորություններ են բացում: Ըստ նրա, այդ հնարավորությունն առկա է նաև Թուրքիայի համար, որպեսզի վերջինիս արտաքին քաղաքականությունը լինի առավել ինքնավստահ⁴¹: Նա քննադատում է թուրք քաղաքական գործիչներին, արտաքին քաղաքականության պատասխանատուներին աշխարհը, Թուրքիայի հարևան պետություններին սև ու սպիտակ ակնոցներով նայելու համար: Ջեմը մերժում է բարեկամ ընդդեմ թշնամու իրարամերժ ընկալումը և առաջարկում խնդիրների լուծման առավել ճկուն բանաձև: Ըստ նրա, արտաքին քաղաքականությունը «պետության շահերի մաթեմատիկական հավասարումն է», հետևաբար, պետությունը պետք է ստեղծի հարմար միջավայր ճկուն և ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնելու համար⁴²: Ջեմի գրքի վերաբերյալ գրած գրախոսականում Ջան Դունդարն առանձնացնում է նաև Ջեմի առաջ քաշած հետևյալ դրույթը, որ 21-րդ դարում Թուրքիան պետք է անպայման վերածվի «աշխարհի պետության», քանի որ Թուրքիան իսլամական աշխարհում եվրոպական չափանիշներ արձանագրած պետություն է և մեր-

⁴⁰ Նույն տեղում, էջ 3:

⁴¹ Նույն տեղում, էջ 5:

⁴² Նույն տեղում, էջ 13:

ձավորարևելյան երկրներին պետք է ներկայացվի որպես նմուշաձև, այն կոչելով «թուրքական նմուշաձև»⁴³:

Ջեմի համար Թուրքիան թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան, թե՛ Ասիական, թե՛ Եվրոպական, թե՛ մահմեդական, և թե՛ աշխարհիկ պետություն էր, հետևաբար, այդ հանգամանքը կարելի էր խելամտորեն օգտագործել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ նոր ինքնության ձևավորման ու ազգային շահերի ճիշտ դիրքավորման համար⁴⁴: Այս ընկալումների մեկտեղմամբ ու արտաքին քաղաքականության մեջ նոր շեշտադրումների ներբերմամբ Ջեմին հաջողվեց էականորեն փոխել Թուրքիայի վերաբերյալ առկա ընկալումը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: Նրա օրոք Թուրքիային շնորհվեց ԵՄ-ի անդամության թեկնածու երկրի կարգավիճակ, դրական միտումներ նկատվեցին Հունաստանի, Կիպրոսի, Գերմանիայի և Թուրքիայի աշխարհագրական մի շարք այլ հարևանների հետ ավանդաբար լարված հարաբերություններում:

Ջեմի կողմից որդեգրած քաղաքական ռեալիզմի մի շարք տարրեր նոր բովանդակությամբ, նոր քաղաքական իրողությունների ներքո շարունակություն գտան նաև նրա պաշտոնավարումից հետո: Ուշագրավ է, որ նույն թվականին Ստամբուլում լույս տեսավ մեկ այլ աշխատություն, որն առավել տեսական էր, սակայն այն ստացավ առավել մեծ ճանաչում: Այս գրքի հեղինակը Ահմեթ Դավութօղլուն էր, իսկ գիրքը կոչվում էր «Ռազմավարական խորություն»⁴⁵: Դժվար է ասել, թե այս երկու աշխատանքների հեղինակները ինչպիսի փոխազդեցություն են ունեցել, կամ ունեցել են արդյոք, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ գրքի հրատարակման ժամանակ Ջեմը գործող արտգործնախարար էր, իսկ Դավութօղլուն՝ համալսարանի պրոֆեսոր, ապա կարող ենք եզրակացնել, որ 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբներին Թուրքիայում ձևավորվել է ընդհանուր գիտակցում, որ Սառը պատերազմի ընթացքում իրականացված արտաքին քաղաքականությունը չի կարող կիրառվել նոր դարաշրջանում: Ավելին, արտաքին քաղաքական նախաձեռնությունները պետք է ունենան

⁴³ C. Dündar, Ben Böyle Veda Etmeliyim, 2008, İstanbul, s. 202-204.

⁴⁴ O. Ormeci, Ismail Cem's Foreign Policy, SDU Faculty of Arts and Sciences, Journal of Sociel Sciences, May 2011, n. 23, p. 245.

⁴⁵ A. Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, İstanbul, 2001.

ոչ միայն նոր ձև, այլ նաև նոր ու գրավիչ գաղափարախոսական բովանդակություն: Հետևաբար, Ջեմի կողմից առաջարկված արտաքին քաղաքական կազմակերպագաղափարախոսական բանաձևերը էական ազդեցություն են ունեցել Արդարություն և զարգացում կուսակցության արտաքին քաղաքականության վրա: Ջեմի առաջարկած որոշ դրույթներ ԱԶԿ-ի օրոք ստացան հետագա զարգացում, որոշները՝ տեսանելի կիրառում, որոշ ուղղություններում եղան իրական ձեռքբերումներ, որոշներում ձեռքբերումները սահմանափակ կամ ժամանակավոր էին: Ստորև ներկայացվում են ԱԶԿ-ի ժամանակաշրջանում մշակված մի շարք ուղղությունների և պրակտիկ քաղաքական կիրառությունների որոշ առանձնահատկություններ:

Որոշակիորեն վերանայվեց երկար տարիներ շրջանառվող այն տեսությունը, ըստ որի՝ Թուրքիան կամ կամուրջ էր Արևելքի ու Արեմուտքի միջև, կամ ճակատային երկիր՝ «Սառը պատերազմի» ժամանակ, կամ սովորական մի պետություն՝ իսլամադավան աշխարհի և Արևմուտքի միջև: Կամուրջ-պետության տեսությունը ենթադրում է կրավորականություն, ոչ թե հնարավորություն է տալիս հանդես գալու իր նախաձեռնություններով. այլ նախատեսում է անցակետի դեր գաղափարները, արժեքները և հաստատությունները մի կողմից մյուսը փոխադրելու համար⁴⁶:

Դրա փոխարեն հաստատվեց Թուրքիայի՝ որպես կենտրոնական, օպտիմալ կամ առանձնահատուկ պետության տեսությունը: Միջազգային հարաբերությունների պրոֆեսոր, դեսպան, Թուրքիայի վարչապետի ու արտգործնախարարի ավագ խորհրդական Ա. Դավութօղլուի բնութագրմամբ՝ Թուրքիան հանդես է գալիս մի քանի տարածաշրջանային ինքնություններով, որոնք հնարավոր չէ ներկայացնել որպես մեկ ինքնություն: «Իր ազդեցության ոլորտներով Թուրքիան միաժամանակ մերձավորարևելյան, բալկանյան, կովկասյան, միջերկրածովյան, Պարսից ծոցի, կենտրոնասիական, կասպյան և սևծովյան երկիր է⁴⁷, ինչի շնորհիվ Թուրքիան կարողանում է

⁴⁶ Turkey's International Role (Interview with A. Davutoğlu). “Utpost-utrikespolitiska studentforeningens webbtidning” (<http://www.utlinkoping.org/utpost.php?article=38&page=0>).

⁴⁷ A. Davutoğlu, Turkey's Foreign Policy Vision: an Assessment of 2007, Insight Turkey, 2008, vol. 10/1, p. 77.

տարաշարժներ կատարել միաժամանակ մի քանի տարածաշրջաններում»⁴⁸: Համաձայն Դավութօղլուի՝ երկրի նոր արտաքին քաղաքականության գաղափարական հենքը պետք է լինեն պատմական և աշխարհագրական խորության թեզերը, որոնցով ապահովվելու է վերոհիշյալ ռազմավարական խորության իրականացումը: Հիմնվելով այդ երկու «խորությունների վրա»՝ Թուրքիան իր անմիջական տարածաշրջանում «ունի պատասխանատվություն և միաժամանակ որոշ իրավունքներ: Այս ամենի հետևանքով Թուրքիան միջազգային հարաբերություններում վերածվում է կենտրոնական պետության, բացառված է նրա՝ ծայրամասային պետություն լինելու հավանականությունը, նա Բալկանների, Մերձավոր Արևելքի ու Կովկասի էպիկենտրոնն է»⁴⁹:

ԱԶԿ-ի արտաքին քաղաքականությունը հիմնված է 5 փոխկապակցված սկզբունքների վրա. Ժողովրդավարացում՝ առանց անվտանգության և կայունության խաթարման, լավ հարաբերություններ («զրո խնդիրներ») հարևանների հետ, գերակտիվ, բազմակողմ և փոխլրացնող քաղաքականություն, նոր դիվանագիտական ոճ (ինքնավստահության), ստատիկ դիվանագիտությունից անցում դինամիկականի⁵⁰:

Վերջին չորս-հինգ տարիների ընթացքում Թուրքիան հեռագնա ու բազմավեկտոր քաղաքականություն իրականացնելու համար առաջնորդվում է արտաքին քաղաքականության նշված սկզբունքներով: Երկիրն ակտիվորեն ներգրավված էր մերձավորարևելյան հակամարտությունների լուծման գործում (Իսրայել-Սիրիա, Իսրայել-Պաղեստին) շահագրգռված էր ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից մերժված Սուդանի և Համասի մեկուսացումը վերացնելու մեջ՝ փորձելով հարթել ամերիկյան դիվանագիտական անհաջողություններից առաջացած աշխարհաքաղաքական անջրպետը: Թեև Թուրքիայի մերձավորարևելյան միջնորդական առաքելությունները մինչ այժմ լայն առումով տպավորիչ հաջողություններ չեն ունեցել, սակայն նա կարողացավ ձեռք բերել Սիրիայի վստահությունը ու տալ ամերիկյան պատժամիջոցներից ազատ շնչելու հնարավորություն:

Այդուհանդերձ, Թուրքիայի արտաքին քաղաքական վերնախավը, հատկապես՝ ԱԳՆ ընտրանին, փակ շրջաններում,

⁴⁸ Նույն տեղում, էջ 78:

⁴⁹ Turkey's International Role (Interview with A. Davutoğlu).

⁵⁰ A. Davutoğlu, Türkiye Merkez ülke olmalı, Radikal, 25.02.2004.

հարցականի տակ էր դնում ԱԶԿ-ի հավակնոտ արտաքին քաղաքական ուղեգիծը՝ այն համարելով բոլոր ճակատներում պարզունակ ու անհեռատես: Այս հանգամանքի հաշվառմամբ ԱԶԿ-ի ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ, տեղի էր տալիս բյուրոկրատական ապարատի կողմից հնչող քննադատություններին և որոշ դեպքերում անգամ սահմանափակում կամ մեղմացնում արտաքին քաղաքական որոշ նախաձեռնություններ:

Մինչև 2009 թ. վարչապետ Էրդողանի և արտաքին գործերի նախարարներ Գյուլի և Բաբաջանի արտաքին հարաբերություններով զբաղվող թիմերը բաղկացած էին բավական երիտասարդ ու դինամիկ մտածողությամբ փորձագետներից, որոնց գործունեության արդյունավետությունը կուսակցության ղեկավարության կողմից բարձր էր գնահատվում: Դրանց թվում են Սուաթ Քընդըրլուլուն, Ջունեյթ Ջափսուն, Էգեմեն Բադըշը, Օմեր Չելիքը, Շաբան Դաշը, Ռեհա Դոնեմեջը, Իբրահիմ Քալընը, Մեվլութ Չավուշօղլուն, որոնք հիմնականում 38-50 տարեկան էին և համարվում են Էրդողանի վստահելի թիմակիցներ⁵¹: Դավութօղլուն ուներ առանձին կարևորություն արտաքին քաղաքական գաղափարախոսական կողմնորոշիչների մշակման և նախարարին կամ վարչապետին ներկայացման հարցերում: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ վերոհիշյալ խորհրդականների մեծ մասն ստացավ առաջխաղացում և բարձր պաշտոններ են զբաղեցնում օրենսդիր և գործադիր մարմիններում:⁵²

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ուսումնասիրողները պնդում են, որ նրանք, ովքեր ցանկանում են հասկանալ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, առաջին հերթին պետք է գործ ունենան Դավութօղլուի հետ: Թե՛ Էրդողանը, թե՛ Գյուլը Դավութօղլուին անվանում են «հոջա», իսկ Թուրքիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Մարկ Հարիսը նրան մի առիթով անվանել էր «Թուրքիայի Քիսինջեր»: Խորհրդականներին Թուրքիայում երկար տարիներ նման ուշադրություն չէր դարձվել, և այս հանգամանքը թուրքական քաղաքա-

⁵¹ Başbakan'ın adamları!..., (<http://milliyet.com.tr/2007/08/02/son/sonsiy13asp>.)

⁵² ԱԶԿ-ի կառավարման առաջին շրջանի արտաքին քաղաքականության մասին առավել մանրամասն տե՛ս Վահրամ Տեր-Մաթևոսյան, Թուրքիան Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության իրականացման համատեքստում, Ռազմավարական անվտանգային հետազոտություններ, 2014, Երևան, հատոր 1, էջ 592-621:

կանության մշակման մեթոդաբանության վերանայման վկայությունն է: Դավութոջլուի քաղաքագիտական, տեսական և փորձագիտական ռեսուրսին գումարվում է արտաքին քաղաքական ոլորտում Էրդողանի, Գյուլի, Բաբաջանի երկարամյա գործունեության հաջողված փորձը: Հարկ է ավելացնել նաև նախագահ Գյուլին, որին փորձառության և տպավորիչ դիվանագիտական կարողությունների համար արտերկրում անվանում են նաև «Թուրքիայի արտաքին քաղաքականության նախագահ»:

Այս տեսանկյունից 2008 թ. «Կովկասյան պլատֆորմի» նախաձեռնությունը նպատակահարմար էր դիտել որպես Դավութոջլուի դոկտրինի բաղադրիչ, որի հիմքում անկայուն տարածաշրջանային գոտիներում ներկայացված լինելու և դրա շնորհիվ սեփական շահերը հետապնդելու նրա ծրագիրն էր: Վրաստանում տեղի ունեցած օգոստոսյան դեպքերից հետո Թուրքիայի համար պատեհ առիթ էր՝ հիշեցնելու իր «ռազմավարական խորության» «կենտրոնական պետություն» լինելու մասին: Օգոստոսյան պատերազմի առնչությամբ սոսկ խաղաղության և զինադադարի հաստատման փորձով հանդես գալու տարբերակը համարելով նվազ ազդեցիկ՝ Թուրքիան որոշեց գործնականորեն ապահովել իր շահերի ներկայությունը արագորեն փոփոխվող տարածաշրջանում: Ընդունված է համարել, որ Էրդողանը «պլատֆորմի» մասին առաջին հայտարարությունն արել է 2008 թ. օգոստոսի 13-ին Մոսկվայում, սակայն իրականում օգոստոսի 10-ին «Սաբահ» օրաթերթում տպագրվել է մի վերլուծական հոդված, որը Թուրքիայի ներքին արձագանքը ճշտելու փորձնական քայլ էր: Օգոստոսի 11-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա կրկին խոսել էր «Կովկասյան դաշինքի» ստեղծման նախաձեռնության մասին: Հարկ է նշել, որ օգոստոսի 6-ից Թուրքիայի վարչապետը հանդիպումներ էր ունենում նորանշանակ ու պաշտոնաթող զինվորականների հետ, և հավանական է, որ կովկասյան միջնորդական նախաձեռնության դրույթներն ընդհանուր առմամբ համաձայնեցված էին ՁՈԻ-ի հետ: Այդ կովկասյան նախաձեռնությունը, մինչև պլատֆորմ կոչվելը, անվանվում էր դաշինք, միություն, պայմանագիր, համաձայնություն, պակտ, հռչակագիր, և միայն Թուրքիայի ղեկավարների ու նրանց բանագնացների կովկասյան այցելություններից հետո առավել ընդունելի դարձավ ներկայումս շրջանառվող տարբերակը: Այսինքն՝

անորոշությունը սկիզբ էր առնում անվանումից և ավարտվում բովանդակություն չունենալու մասին խոսակցություններով:

Չնայած ԿԿՀՊ-ին տրվող հոռետեսական գնահատականներին՝ թուրքական կողմը հետևողական կերպով առաջ էր տանում այդ գաղափարը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ տվյալ նախաձեռնությունը ոչ թե շուտափույթ արձագանքման քայլ էր, այլ տեղավորվում է Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր ուրվագծերի մեջ, ապա դա Կովկասում ներկայացվածություն ապահովելու հնարավոր փորձ էր՝ միտված Կովկասից դուրս չմնալուն, քանի որ դա կդիտվեր որպես ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության աշխարհաքաղաքական և հայեցակարգային բացթողում: Ուստի հավանական է, որ մոտ ապագայում Թուրքիան ավելի մեծ ջանքեր կգործադրի այդ նախագծի հետագա հաջողության համար: Դա ավելի հավանական է թվում նաև մերձավորարևելյան քաղաքականության ասպարեզում Էրդողանի կառավարության ոչ այնքան տպավորիչ ձեռքբերումների համապատկերում: Տվյալ փուլում հակասություններ են նկատվում Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում որոշում կայացնողների ավանդական և ԱԶԿ-ի թևերի միջև: Եթե նախկինում հակասություններն արտահայտվում էին գերազանցապես Համասի առաջնորդի և Սուդանի առաջնորդի Թուրքիա կատարած այցերի քննադատությամբ, ԵՄ-ից հետզհետե հեռացման անընդունելի քաղաքականությամբ, Իսրայելի նկատմամբ Էրդողանի կառավարության անընդունելի դիրքորոշումներով, ապա վերջին շրջանում ավանդական կողմնորոշում ունեցող դիվանագետները նշում են, որ ԱԶԿ-ի բազմավեկտոր ու նախաձեռնողական արտաքին քաղաքականությունն արկածախնդրություն էր, անիրական ու պարզունակ և կարող էր վնասել Թուրքիայի արտաքին շահերին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թուրքիայի արտաքին քաղաքականության ձևավորման, իրականացման և վերագնահատման գործընթացները կրում են մի շարք անհատների կառույցների, կազմակերպությունների ու գործոնների ազդեցությունը: Դրանցից որոշները հեշտությամբ տեսանելի են և ակնհայտորեն համագործակցում են ԱԳՆ-ի հետ, կամ ուղղորդվում վերջինիս կողմից: Մյուսների կապը արտաքին քաղաքականության հետ առաջին հայացքից դժվար է տարբերակելը, սակայն դրանց ազդեցությունը Թուր-

քիայի արտաքին քաղաքականության վրա տեսանելի են դարձել որոշ ժամանակ անց: Արտաքին քաղաքականության ձևավորման վրա զգալի ազդեցություն են ունեցել նաև անհատները, որոնք նշանակալի կերպով ներազդել են արտաքին քաղաքականությանն առնչվող որոշումների կայացմանը՝ հաճախ շրջանցելով օրենքով սահմանված դրույթները: Թուրքիայի արտաքին քաղաքականությունը վերջին տարիներին ենթարկվել է զգալի փոփոխությունների: ԱԶԿ-ի կառավարման տարիներին արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում ներգրավվել են նոր դերակատարներ, որոնք նոր բովանդակություն են հաղորդել Թուրքիայի արտաքին քաղաքականությանը: